№ 69 ՇԱԲԱԹ, 2 ԱՊՐԻԼԻ

1911

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 2 ԱՊՐԻԼԻ № 69

ՄՇԱԿ

ՀԱՍԱՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆոն № 67.

ՄՇԱԿ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSHAK“.

Ապրիլի 1-ից միինչեւ տարվայ վերջը 8 ռուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սրբուհի Երէցփոխեանն իր որդիներով՝ Ու հարսով սրտի խորին կսկիծով յայտնում է բարեկամներին, ազգականներին և պաշտօնակիցներին իր թանգագին և անմոռանալի ամուսնու՝ Բ. Մասի հաշտարար-դատաւոր

Աբրահամ Գաբրիէլեան ԵՐԷՑՓՈԽԵԱՆԻ

մահը: Ամբիծքն այսօր, շաբաթ, ապրիլի 2-ին, երեկոյեան ժամը 7-ին, հանգուցեալի բնակարանում (Գանձակայա փող., № 15): Թաղարկաւորութիւնը վաղը, կիրակի, ապրիլի 3-ին, առաւօտեան ժամը 10-ին, դէպի Վանքի մայր-եկեղեցին: Թաղումը Վերայի հայոց գերեզմանատանը: 316. 1—1

Մարտի 30-ին կարճատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց

ԱՒԵՏԻՍ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆՑԸ,

որի մահն խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ հանգուցեալի հարս Նադեժդա և եղբայր Առաքել ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆՑՆԵՐԸ և քրոջ որդիք Թէոդորոս և Յակոբ ՄԱԴԱԹԵԱՆՑՆԵՐԸ: Թաղարկաւորութիւնը այսօր, շաբաթ, ապրիլի 2-ին, առ. ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Սուդերնայա փողոց № 36) դէպի Զրկինեանց եկեղեցին: Թաղումը Վերայի հայոց գերեզմանատանը: 311. 2—2

Սուազ Աբրահամ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԸ իր որդի Հայկի հետ միասին հոգեկան խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր թանգագին և անմոռաց կնոջ, իսկ երկրորդն իր ջերմ սիրելի մօր՝

ՆԻՆԱ ԱՐՏԷՄԻԵՎՆԱ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԻ

յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ Պետերբուրգում: Թաղման և ամբիծքի մասին կը յայտարարվի առանձին, մարմինը Թիֆլիս բերվելուց յետոյ: 312. 3—2



ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ Ա. ՌԵՒԻՏՐԻ ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

ԶԱՏԿԱԿԱՆ ՄԵԾ ՅՈՒՅՑԱՀԱՆԴԷՍ
ԱՆՎՆԱՍ ՆԵՐԿԵՐ ԶՈՒԵՐԻ ՀԱՄԱՐ

Ֆրանկֆուրտեան փոշի—խմորը հասցնելու համար: Վանիլ: Շաֆրան: Կարդամոն: Մշկընկոյզ և գոյն: Ծուշ՝ քաղցր և դառն: Ուղ՝ կիտրոնի և վարդի: Հոտաւէտ լէպէշկաներ՝ նալիվկաներ և լիկեօրներ պատրաստելու համար, և այլն:

(2. ե.) 332. 2—1



Սիստեմատիկ կերպով Օդոլի ամենօրեայ գործադրութիւնը տամների և բերանի խոռոչի ամենալաւ խնամքն է:

(M. 74170/74189) 236. 1—1

ՆՈՐ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Անդրկովկասի համար ծրագրվում է մի նոր երկաթուղային գիծ:

Դա Կարս-Սարիղամիշեան գիծն է: Այդ երկաթուղու կառուցման կարիքի հողերի և ներկայացնում է դաշտային և արօտային տարածութիւնների ընդարձակ սարահարթեր, որոնք կարող են առանձին արդիւնաբերութիւն ցոյց տալ, երբ կը մտցվեն կատարելագործութիւններ հողագործութեան և անասնապահութեան արհեստի մէջ:

Բայց և ներկայ մեր գիւղատնտեսական վիճակում երկաթուղին կառաջացնի փոփոխութիւններ ազգաբնակութեան տնտեսական կեանքում և կարագացնի այն շարժումը, որ սկսել է երևան գալ այդ շրջանում մթերքների վաճառականութեան և տնտեսական բարեփոխութեան վերաբերութեամբ:

Երկաթուղային նոր գիծը մի քայլ ևս մօտեցնում է Անդրկովկասի և Թիւրքիայի բնակիչներին դէպի միմեանց և աւելի ու աւելի զգացնել տալիս անհրաժեշտութիւն՝ կապելու երկու սահմանակից երկիրները ճանապարհների ցանցով արագ հաղորդակցութեան համար:

Մենք մի քանի անգամ ընդգծել ենք տնտեսական սերտ փոխադարձութեան կարևորութիւնը անդրկովկասեան և փոքր-ասիական շրջանների միջև և այժմ հաճութեամբ արձանագրում ենք, որ իրագործութեան է մօտենում դարձեալ մի ծրագիր՝ նոյն նպատակին ծառայող և նպաստող:

Ս. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

31 մարտի

Վլադիկավկազ.—Ցօնվում է քաղաքի 50-ամեակը: Հոգեհանգիստներ կատարվեցին Ալէքսանդր II Կայսրի, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի և կոմս Լորիս-Մելիքեանի և առաջին քաղաքագլուխ Լեբեդեւի յիշատակին: Քաղաքային դուման յատկացրեց 1,000 ռ., Տերեքի զօրքը՝ 3,000 ռ. Ալէքսանդր II Կայսրին արձան կանգնեցնելու: Արհեստաւորաց դպրոցում հատատավեցին թոշակաւորների տեղեր Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի, կոմս Լորիս-Մելիքեանի և Լեբեդեւի անունով:

Պետերբուրգ.—Հինգ բժիշկների համախորհուրդը գտաւ, որ Սազոնովի թոքի բորբոքումը երկարելու է: Ամենօրեայ բիւլետէնները դադարեցվեցին:

Տեխնիկական մասնաժողովը ինժեներ Օսադչիի նախագահութեամբ քննելով անգլիացի Ստիւարտի նախագիծը Կովկասում գիդրօէլեքտրական կայաններ կառուցանելու մասին՝ հաւանեց ձեռնարկութիւնը և մշակեց կոնցեսիայի նախագիծ:

Մոսկվէն.—Կոնֆերէնցիայում պրոֆ. Խուդասոն առաջարկեց շինուկ սրսկել ժանտախտով հիւանդների հետ շփում ունեցողներին անխտիր: Առաջարկութիւնն ընդունվեց: Եապոնացիները յայտնեցին, որ երեք մարդ այդ տեսակ սրսկումից առողջացան: Զաբօլոտնին և Խավկինը յիշեալ դէպքերը գտնում են պակասաւոր հետազօտված:

Բակտերիօլոգիայի և պատալոգիայի նստաշրջանը աւարտեց իր պարապմունքները: Կոնֆերէնցիայի անդամները շնորհակալութիւն յայտնեցին նախագահ պրոֆ. Խուդասոյին:

—

Ադրիանոպէս.—Նստ վասսալներ մայրաքաղաքից գալիս են նոր խնամակալի ընտրութիւններին մասնակցելու: Զինուորական մինիստրը ժամանակաւորապէս ձեռքն առաւ կառավարութեան ղեկը:

Թաւրիզ.—«Թաւրիզ» լրագիրը գրում է, որ Թէհրանի թիւրքաց դեսպանատունը և թիւրք մինիստրները դիտմամբ աչք են փակում և ժխտում են թիւրքերի ակտիվ գործունէութիւնը Աստրապատականի գրաւված շրջաններում:

—

Բրէստ.—Նաւաշինարանների բանւորների գործադուլը վերջացաւ:

—

Ստոկհոլմ.—Ստորագրվեց պայմանագիր Սպանիայի և Շվեդիայի միջև միջնորդ դատարանի մասին:

—

Պարիզ.—Սենատը ընդունեց 1911 թ. երկու զրահանաւ ծովը իջեցնելու օրինագիծը:

Սենատորներ Կլէմանսոն և Պուանկարէն մտադիր չեն հարցապնդում ուղղել կառավարութեան՝ պատում Մոնիսի արած յայտարարութիւնների առիթով:

—

Լոնդոն.—Ռէյտերը հաղորդում է, որ Ֆրանսիան նախազգուշացրել է Անգլիային Մարոկկոյում իր անելիքների մասին: Անգլիական շրջաններում կարծում են, որ դրութիւնը Մարոկկոյում այնքան էլ կրիտիկական չէ, ինչպէս թւում է քիչ տեղեակ անձանց:

—

Նիւ-Յորկ.—Երէկ ուրբանը անգին փաստեր պատճառեց Կանզաս, Միսսուրի և Օկլահոմա նահանգներում, ուր սպանվեցին 13, վիրաւորվեցին բազմաթիւ մարդիկ: Երկու գիւղ հիմնայատակ կործանվեցին:

—

Տոկիո.—Պրինց և պրինցուհի Խիգաշիքուշիմի, ծովակալ Տոգո և գեներալ Նոգի մեկնեցին Լոնդոն՝ ներկայ լինելու թագաւորի թագադրութեան:

Սօշիվարի թաղի փլատակների տակից հանեցին եօթ աղջիկների դիմակներ, որոնց՝ տանտիրուհին փակել էր նկուղում:

—

Վիէննա.—«Ֆրեմդէնբլատը» հաղորդում է, որ Ֆրանց-Յովսէփ կայսրը Ոսկէ Բանի շքանշան շնորհեց Ֆերդինանդ թագաւորին:

«Նէօյէ-Ֆրէյէ-Պրեսսէն» այդ հանգամանքին վերագրում է քաղաքական կարևոր նշանակութիւն. ասում է, որ նա մատնանշում է Աւստրիայի և Բոլգարիայի վաղեմի բարեկամական յարաբերութիւնների վերականգնումն: Ամբողջ պետութեան մէջ շքանշան պարգևելը ընդունվեց սրտագին համակրանքով:

—

Աթէնք.—Աթէնքի գործակալութիւնը հաղորդում է, որ Զմիւռնիայում յունական ապրանքների բոյկոտը սաստկանում է: Ամբոխն արգելք է լինում յունաց ապրանքների առաքման: Յունական նաւերը չեն մտնում Զմիւռնիա:

Ամբոխը ներս խուժեց և քարուքանդ արեց յոյն լրագիրների կենտրոնական գործակալութիւնը։

ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՑՈՒԶՄՈՒՆՔՆԵՐԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

31 մարտ

Էպերնէ.—Գինեգործների կոմիտէն մի կոչ հրատարակեց, որով Շամպայնի գինեգործ կոմմունները բոլոր պաշտօնական անձինք հրաւիրվում են հրաժարվել իրանց լիազօրութիւններից. բոլոր գինեգործներին առաջարկվում է՝ չը վճարել հարկերը, և պահանջվում է, որպէսզի շամպայն պատրաստելու շրջանը սահմանափակվի։

Մարտի 29-ին Սին իրանից ներկայացնում էր սոսկալի տեսարան։ Այլվում էին շատ տներ, հոսում էին գինու գետակներ. փողոցներում շատ հարբածներ կային ուներալով իրանց գրպաններում գողացված շամպայնի շշեր։ Փողոցները և կամուրջները գրաւված են զօրքերով։ Կողոպտող ամբոխի և զօրքերի միջև տեղի էին ունենում ընդհարումներ։ Հեծելազնդի գնդակներից վիրաւորվեցին մի քանի զինուորներ։ Գիշերվայ ժամը 1-ին Սին զօրքերը մաքրեցին անհանգիստ տարրերից։ Գալիս են նորանոր զօրքեր կարգուկանոնը պաշտպանելու համար, ընդամենը թւով 12,000 մարդ։ Մի ռումբից երեք զինուոր վիրաւորվեցին։

Առաւօտեան գինեգործները քարուքանդ արին գինու պահեստները։ Հերդեհված տների կրակը դեռ շարունակվում է։ Փողոցներում գինին հոսում է գետակներով։ Զօրքերը քանդեցին պատնէշները՝ ցրելու ցուցարարներին։

—

Ռէյմս.—Գինեգործները պատնէշներ կառուցին Վանտէլ գիւղում։ Հեռագիրը և հեռախօսը չեն գործում։ Գինեգործները կրակեցին զօրքերի վրա, բայց վերջինները գրաւեցին գիւղը առանց արիւնհեղութեան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հինգշաբթի, մարտի 31-ին, նշանակված էր Թիֆլիսի Հայ Գիւղատն. և Տնայնագործ. Ընկերութեան ընդհանուր ժողովը։

Նշանակված ժամից մի ժամ առաջ սկսեց տեղալ սաստիկ անձրև։ Փողոցներում անց ու դարձը դադարեց։ Բայց և այնպէս շուտով հաւաքվեց մօտ քսան հոգի, և նիստը սկսվեց։

Նախագահում էր Ալ. Քալանթար։

Նախագահը, յայտնելով, որ Ընկերութեան նպատակներին մեծ համակրութեամբ վերաբերվող անդամներից մէկը, որը միևնոյն ժամանակ և Ընկերութեան վերաստուգող յանձնաժողովի անդամ էր, Աւետիս Վարդապետեանը այդ օրը վախճանվել է, առաջարկեց յարգել հանգուցեալի յիշատակը ոտքի կանգնելով։

Այնուհետև ժողովը դիմեց իր պարապմունքներին։

Նախագահը զեկուցեց, որ Ընկերութեան վարչութիւնը մշակել է մանրամասն ծրագիր այն դասընթացքների համար, որ նա որոշել է կազմել ներկայ ամառը։ Այդ ծրագրով դասընթացքները պէտք է տան թէ տեսական և թէ գործնական գիտելիքներ իրանց ունկնդիրներին։ Դասընթացքները կը հիմնվեն Փամբակի Մեծ-Ղարաքիլիսա գիւղում երկու ամսով, սկսած յունիսի կէսից մինչև օգոստոսի կէսը։ Դասախօսներ կը հրաւիրվեն մասնագէտներից։ Կը դասաւանդվեն.

1) Երկրագործութիւն և բոյսերի մշակութիւն,

2) Բանջարաբուծութիւն,

3) Անասնապահութիւն և կաթնատնտեսութիւն,

4) Պաղաբուծութիւն և պարտիզպանութիւն,

5) Մեղուաբուծութիւն և

6) Թռչնապահութիւն։

Ունկնդիր կընդունվեն բոլոր ցանկացողները՝ գիւղացիներ, ուսուցիչներ, բարձր դասարանների աշակերտներ։ Ընկերութիւնը կունենայ հանրակացարան՝ ձրիապէս տալու աշակերտներին։ Ապրուստամիջոց պէտք է հայթայթեն իրանք աշակերտները։

Ժողովականները արին մի քանի նկատողութիւն, իսկ բժիշկ Մինասեանցը ցանկալի համարեց դասընթացքների մէջ տեղ տալ և առողջապահական դասախօսութիւններին։

Նախագահը զեկուցեց, որ Արսէն Բուդաղեանը դեռ անցեալ տարի դիմել էր Հայ Գիւղատնտ. և Տնայնագ. Ընկերութեանը՝ խնդրելով կազմակերպել գիւղատնտեսական դասընթացք Սալիանի դպրոցին կից։ Վարչութիւնը մշակել էր գործունէութեան մի ծրագիր և նախահաշիւ, որը ուղարկել էր Ա. Բուդաղեանին։ Նախագահ Ա. Քալանթար իր այս տարվայ ճանապարհորդութեան միջոցին տեսնվել էր Ա. Բուդաղեանի հետ և համաձայնութեան եկել առաջիկայ գործունէութեան վերաբերմամբ։ Զատկից յետոյ կը սկսվեն գործնական քայլեր Սալիանի շրջանում, ուր կուղարկվի մասնագէտ-գիւղատնտես։

Նախագահը զեկուցեց, որ դարաքիլիսեցի Եղիազարեանը, ցանկանալով հիմնել գիւղատնտեսական մի դպրոց հայրենի գիւղում, դիմել է Ընկերութեանը՝ մշակել դպրոցի ծրագիրը և ծախքերի նախահաշիւ։ Վարչութեան անդամները մի քանի անգամ խնդիրը քննել են և եկել այն եզրակացութեան, որ Մեծ-Ղարաքիլիսայում կարելի է հիմնել ստորին կարգի գիւղատնտեսական դպրոց, որը պէտք է ունենայ բաւականաչափ հող՝ գործնական պարապմունքների համար։ Վարչութիւնը յանձն է առել մշակել կանոնադրութիւն և կազմել նախահաշիւ։

Ա. Բարխուդարեան կարդաց զեկուցում իր այն ճանապարհորդութեան մասին, որ նա կատարել է դէպի Երևանեան նահանգ՝ ուսումնասիրելու մեղուների հիւանդութիւնները և յատկապէս փտախտը։ Այցելելով Երևանի, Նախիջևանի և Ագուլիսի շրջանները, նա մեծ բաւականութեամբ տեսել է, որ այդ տեղերը ազատ են մնացել կորստաբեր ախտից։ Ա. Բարխուդարեանը չէ կարողացել այցելել Վայոց-Ձորի կամ Դարալագեազի շրջանը՝ ձիաների և ցրտի պատճառով։ Այդ տեղերում նա կը շրջագայէ մայիս ամսին, երբ նա նորից կուղևորվի դէպի Երևանեան նահանգ։ Ա. Բարխուդարեան ի միջի այլոց հրաւիրեց Ընկերութեան ուշադրութիւնը անդրկովկասեան ժողովրդի մէջ տարածված մի նախապաշարմունքի վրա, որ իբր թէ մեղուապահութիւնը աննպաստ է հացաբոյսերի հունձի համար և իբր թէ մեղուապահութիւնը «վնասում է հացը»։ Զեկուցանողը առաջարկում է այդ առիթով հրատարակել մի բրոշիւր և տարածել ժողովրդի մէջ։

Զեկուցման առիթով Ա. Մխիթարեանը այն միտքը յայտնեց, որ փտախտ ուսումնասիրութիւնը պէտք է կատարվի գարնանը և ամառը, երբ մեղուների որդը, որ իսկական զոհն է փտախտի, գոյութիւն և կենդանութիւն ստացած կը լինի։ Ա. Բարխուդարեան պնդում էր, որ ներկայումս էլ կարելի է գաղափար կազմել հիւանդութեան մասին չոր մեղրահացերից, մանաւանդ այն շրջաններում, ուր դեռ ևս չը կան նորամուտ շրջանակաւոր փեթակներ։

Ա. Քալանթար, կանգ առնելով Ա. Բարխուդարեանի ակնարկած նախապաշարմունքի վրա՝ մեղուապահութեան կործեցեալ վնասակարութեան վերաբերութեամբ, առաջ բերեց մի շարք հերքող առարկութիւններ և ընդգծեց, որ Խարկովի սերմնաբուսական (սելեկցիոնական) ժողովում անցեալ տարվայ աշնանը ապրնօմ Կլինգէնը կարդացել է մի յատուկ զեկուցում մեղուների տուած օգուտների մասին բուսականութեան զարգացման համար։ Ա. Քալանթար նպատակայարմար է դտնում հրատարակել թռուցիկ և կազմել զրոյցներ գիւղացիների հետ։

Վ. Ղազանչեան կարդաց մի զեկուցում «բանջարաբուծութեան փորձերի մասին Ալէքսանդրօպոլում» և հաղորդեց հետաքրքրական տեղեկութիւններ այն արդիւնքների մասին, որ նա ստացել է բանջարաբուծութիւնից, գործադրելով մշակութեան նորագոյն եղանակներ և շինելով ջերմոցներ։ Զուգակցելով ջերմոցները բաց ածունների հետ՝ նա արագացնում է բոյսերի զարգացումը առաջին շրջանում և տալիս արժանիներ շուկային, երբ նրանք կարող են վաճառահանվել լաւ գներով։

Ժողովականները մատնացոյց եղան բանջարաբուծութեան զարգացման անհրաժեշտութեան վրա մեր գիւղական շրջանում և ցանկալի համարեցին, որ Ընկերութիւնը ընդարձակէր իր աշակցութիւնը այդ ասպարէզում։

Բ. Մկրտումեան, նկարագրելով հիւանդութիւնների տարածումը գիւղերում և ընդգծելով երկրագործի ֆիզիկական ոյժի պակասելու և նուազելու վնասակարութիւնը, հրաւիրեց Ընկերութեան ուշադրութիւնը այդ չարիքին դարման անելու միջոցների վրա։

Ընկերութեան անդամները յայտնեցին, որ նրանք մասնագիտապէս չեն կարող զբաղվել այդ կարևոր գործի կազմակերպութեամբ, բայց պատրաստ են իրանց կողմից աշակցութիւն ցոյց տալ դասախօսութիւններով և իրանց համար մատչելի ուրիշ եղանակներով։

Նիստը փակվեց ժ. 10½-ին։

ԵՐԵԿՈՅԹ Կ. Հ. Բ. Ը. ԴԱՀԼԻՃՈՒՄ

Հինգշաբթի, մարտի 31-ին, Կ. Հ. Բ. Ը. դահլիճում կայացաւ մի ընտանեկան երեկոյթ բարեգործական նպատակով։ Սատիկ անձրևի և վատ եղանակի պատճառով երևի, երեկոյթը գրաւել էր քիչ բազմութիւն։ Իսկապէս երեկոյթը երաժշտական-ձայնական էր, որին պէտք է հետևէին և պարեր, բայց կարգադրիչները հարկ էին համարել, որ մի դասախօսութիւն ևս կարդացվի, և դրա համար հրաւիրել էին պ. Հ. Յովհաննիսեանին, որ խօսեց երեկոյթից առաջ Շիրվանզադէի գրական գործունէութեան մասին, երևի այն պատճառով, որ առաջիկայում պէտք է կատարվի նրա յօբիլեանը։ Այդ դասախօսութեան մէջ պ. Յովհաննիսեան ուրուագծեց Շիրվանզադէի ստեղծագործութիւնը և խօսեց նրա մի քանի երկերի մասին։ Դժբաղդաբար, նա ընկաւ մի քանի չափազանցութիւնների և անճշգրտութիւնների մէջ և նրա խօսքը դուրս եկաւ ոչ թէ քննադատութիւն, այլ լոկ ազօլգիա։ Պէտք է ասել սակայն, որ նա շտապեց յայտարարել, թէ իր ասածները կազմում են լոկ ընթերցողի տպաւորութիւններ։

Այդ դասախօսութեան մի անյարմար կողմն ևս այն էր, որ վիճաբանութիւններ թոյլատրված չէին։ Եթէ թոյլատրված լինէին, անշուշտ՝ կը գտնվէին առարկողներ և քննադատներ։ Լաւ կը լինէր, որ այդպիսի դասախօսութիւններ կարդացվէին, օրինակ, Հասարակական ակումբում, ուր կարելի կը լինի և վիճաբանել։

Դասախօսութիւնից յետոյ տեղի ունեցաւ երաժշտական և երգեցողական մասը, երգեցին տիկ. Աֆրիկեան, օր. Կովալզի, պ. Դօմբրովսկի, որոնք արժանացան բուռն ծափահարութիւնների։ Ս. Քափանակեան կարդաց ռուսերէն մի քանի ոտանաւորներ, որոնք նոյնպէս ողջունվեցին ծափահարութիւններով, ինչպէս և Մամիկոնեանի երգած կուպլէտները Թիֆլիսի կեանքից։ Եթէ տիկ. Աֆրիկեան և օր. Կովալզի չը բարեհաճէին երգել մի-մի հայերէն երգ, երեկոյթը ոչ մի հայկական բնոյթ չէր ունենայ, քանի որ նոյն իսկ դասախօսութիւնը Շիրվանզադէի մասին, որ արտասանվում էր հայերից բաղկացած լսարանի առաջ, խօսվեց ռուսերէն։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դալագեա (Գեօկչայի գ.), 20 մարտի

Գաւառիս գիւղական ցաւերից՝ անտէրաստութիւններից՝ ոչ պակաս տեղ է բռնում նաև «խաղցաւ» կոչված անմիտ հիւանդութիւնը. այս ցաւը յատուկ է, ընդհանրապէս, իգական սեռին. ում չէ յայտնի, որ գեղջկուհիներից քանի քանիսը զոհվում են անչափահաս և բռնի ամուսնութեան. ահա, գլխաւորապէս, այդպիսիներին օգնութեան է հասնում «խաղցաւ» հիւանդութիւնը։ Կնոջ հիւանդանալու դէպքում փոխանակ բժշկի օգնութեանը դիմելու՝ դիմում են գրբացներին. և սրանք հաստատում են, որ կինը վախեցած է, որի բուժելու միակ միջոցը, եղբը պարէն է։ Կանչում են փողճաբներին, փչում են փողը, իսկ ուժասպառ հիւանդը սկսում է պարել ինչպէս խելագար. ամեն կողմից հաւաքվում է պարողի գլխին խառնիճաղանը՝ առանց սեռի և հասակի խտրութեան, և ստիպում են խեղճ հիւանդին մերթ պարել դուրսը փողոցում, մերթ աղբիւրի մօտ, մերթ հարևանի տանը՝ այն նպատակով, որ, երբ հիւանդը ոտք դնէ իր վախեցած տեղը, գերբնական ոյժով պիտի առողջանայ։ Պարում են 15-ից մինչև 30 օր, և հետևանքը այն է լինում, որ շատերը մեռնում են։ Մեր այս տարվայ մեծ պասը դեռ նոր ենք կիսել, բայց 3-ը արդէն պարել են. նրանցից մի խեղճ կին թողնելով 4 որբեր մեռաւ։ Իսկ երկուսը դեռ պարում են։ Մինչև այժմ փողճաբներին 35 ր. փող են տուել և այնքան էլ ուրիշ ծախսեր. միայն թէ կանայք կամ մեռնեն կամ առողջանան։ Այսպիսի զոհերը սովորական են մեր խուլ գաւառում։ Յ. Մելեան

ՍՏԱՒՐՕՊՕԼԻ ՀԱՄԲԱՒԱՐԵՐ

II

Ստաւրօպօլ, 26 մարտի

✦ Ամենակարող գիտութեան շնորհիւ մարդս օդին էլ տիրեց։

Անթև մարդը թեւաւոր թռչունների հետ մրցում է այժմ։

Արձրից ոչ պակաս թափով՝ մարդս էլ այժմ սլանում է իր այէրօպլանով բարձրագագաթ լեռների ու խոր ձորերի վրայով։

Գիտութիւն... դու ամենակարող ես...

Եթէ կար մէկը Ստաւրօպօլում, որ կասկածում էր գիտութեան այդ ոյժի վրա, երէկ իր սեփական աչքերով տեսաւ և հաւատաց։ Մեզանում էլ Թովմա առաքեալ չը կայ ենէկվանից։

Ստաւրօպօլցին միայն լրագիրներից ու հանդէսներից գիտէր, որ մարդս այժմ թռչունի պէս թռչում է, բայց այժմ տեսաւ իր աչքով։

Ուրբաթ օրը, մարտի 25-ին, երեկոյեան ուղիղ ժամը 4-ին, ինչպէս յայտարարված էր, Գաբէր-Վլըյնսկին թռիչք կատարեց ֆարմանի բիպլանով։

Կարծում եմ, որ միայն մահամերձ հիւանդները այդ ժամին տանը մնացած պիտի լինէին, որովհետև դա մի այնպիսի նորութիւն էր ստաւրօպօլցիների համար, որ ամեն ինչ մոռացած՝ այդ ժամին բազմահազար ժողովուրդը վազում էր դէպի այէրոդրօմը, իսկ ուղացողները բարձրանում էին ռուսաց եկեղեցու գաւիթը, որտեղից պարզ երևալու էր ամեն ինչ։

Բազմութեան ցնծալից աղաղակներով վեր սլացաւ մեր կարիճ օդաչուն՝ իրան հետ վեր բարձրացնելով աչք ունեցող ամեն մի մարդ արարածի սիրտը, յառած աչքերը դէպ իրան ուղղած։

Ամբողջ քառորդ ժամ նա պտտվեց օդի մէջ և ապա իջաւ կրկին այէրոդրօմը։

Խօսվում էր, որ նա գնալու է Արմաւիր և 40 բօպէից վերադառնալու, բայց նա այդ չարաւ։

Վերջապէս այդպէս յայտարարված էլ չէր։ Երևի այդ կը լինի ամսիս 27-ին՝ երկրորդ թռիչքին։

Ճիշդ է, այդ օրը Ստաւրօպօլը հաղարներ դրեց այդ զուարճութեան համար, բայց երանի նման գիտական զուարճութիւններ յաճախ կրկնվեն մեզանում և թող Ստաւրօպօլը հաղարներ դնի միշտ էլ. դա աւելի օգտակար է, քան «խաւարի թագաւորները» տուած կօպէկները։

Բայց ով դարձրեց ստաւրօպօլցու համար այսքան նշանակալից՝ մարտի 25-ի օրը։

Բագրատ Պետրոսեան ազգանունով մի հայազգի պարոն, որը մեզանում մի սիրված, յարգված անձնաւորութիւն է։

Նա շատ բաներ է արել մեզանում շնորհակալութեան արժանի, բայց սա գերազանցեց բոլորին։

✦ Ի լրումն անցեալներում մեր յայտնած տեղեկութեան («Մշակ» № 61) պիտի յայտնենք, որ վերջնականապէս վճռված է երկաթուղային գիծ անցկացնել հետևեալ ուղղութեամբ. Ստաւրօպօլ-Պետրօվսկոյ-Բլագօդարնոյ, առանձին ճիւղ անցկացնելով դէպի Դիմնօյ։ Շատ բաներում յետաձգեց մեր նահանգական քաղաքը վերջապէս կեանք է ստանալու։ Ստաւրօպօլը պիտի լինէր Բագու-Բօստօվեան մայր գծի վրա, բայց կոյր բաղդի անօրինութեամբ մի ինչ-որ Բօմանօվսկի-Խուտօրխլով է Ստաւրօպօլից վերջինիս դարձրել։

✦ Այս տարվան երկարատև և դաժան ձմեռը մարդկանց կասկածի մէջ էր թողել՝ թէ մի օր դարուն էլ պիտի գայ

մակերպիլ սրբազան Ներսէսի առաջարկին և վերահաստատել Օրմանեանը Էրզրումի առաջնորդութեան մէջ։

1884-ի հոկտեմբերի վերջերուն էր՝ գեր. Օրմանեան կայսերական իրադէով և այն ժամանակի մեծ վէզիր Ռիւշիկ-Սայիդ փաշայի լիազօր յանձնարարականով՝ ուղղեալ կը վերադառնար իր վիճակն՝ Էրզրում։

Գեր. Օրմանեանի կրթական և ուսումնական բարձր ձիրքերը գնահատելով՝ մեծանուն հանգուցեալ պ. Մկրտիչ Սանասարեան Էրզրումում իր բացած գիշերօթիկ վարժարանին վերին տեսչութիւնը կը յանձնէ նորին գերապատուութեան։

Օրմանեան ամբողջ 7 տարի պաշտօնավարած է Էրզրում և իր այդ ամբողջ պաշտօնավարութեան միջոցին երևցած է բարուց մէջ համեստ և մաքրակենցաղ, անշահասէր, անաչառ, մարդասէր, խոնարհ և ժողովրդական. իսկ իր վեհանձն անյիշաչարութիւնը կամ ասպետական ոգին առակի կարգ անցած է Էրզրումի մէջ։

Գեր. Օրմանեանը Էրզրումում ամբողջ 7 տարիներ առաջնորդական բոլոր հասոյթներն ու եկամուտները թողուցած էր ազգ. թաղական կամ հոգաբարձական մնաուկին, և այդ մնաուկն էր, որ կը մատակարարէր ազգ. վարժարանաց ծախքերը. իսկ ինքն առաջնորդն 35 օսմանեան լիրա կը ստանար ամսաթոշակ. և այդ գումարը շատ անգամ նուազ կամ պակաս գալով՝ կ. Պոլսէն իր հօրմէն կամ եղբայրներէն դրամական օժանդակութիւն կը ստանար։

Օրմանեանի օրով մերձակայ կամ շրջակայ հայաբնակ աղքատ գիւղերու համար պակի, նշանաւորի կամ հարսանեաց համար եկեղեցական հրամանները ձրի կը տրուէին. յիշենք նաև, թէ Օրմանեան սրբազանը գիւղերը այցելած ժամանակ ժողովուրդը հոգևորապէս մխիթարելէ զատ՝ գիւղի դպրոցին կամ եկեղեցւոյն ևս դրամական նուէրներ ըրած է։

Օրմանեանի Էրզրումում առաջնորդութեան ամբողջ 7 տարիներուն՝ տեղւոյն ազգ. առաջնորդարանի դռներն ընդմիշտ կոնակի վրայ բաց էին դրսեցի պանդուխտ հայ վարդապետի, եպիսկոպոսի, քահանայի և վարժապետի առջև, որոնք առաջնորդարանի մէջ օրերով, շաբաթներով խնամու

բայց տաղանդաւոր. և այդ մարդը զարմանում է, որ իրան մի ինչ-որ օրիորդ չէ սիրում...

Նոյնպիսի հոգեկան և ֆիզիքական հիւանդ է Ռ. Սեակը, որը, դառնալով պօէտին, ասում է.

Քերթող, մեռելի շէն երգ մը հանէ թոքերէդ, որպէսզի պ. Սեակը այս գիշեր «պիտի պարէ, եղեռնօրէն շէն, խելար»...

Բայց, ի հարկէ, քերթողը ոչինչ չէ պատմում, այլ դիմում է հոգեկան բժիշկներին, առաջարկելով Սեակին ընդունել գժանոցակային, գժանոցում տեղ չը լինելու պատճառով, Սեակը մտնում է «Գարուն» ամանակի մէջ...

Տասներկու սեահոգի տղամարդ բանաստեղծների մէջ մի հատ էլ հայ աղջիկ կայ. սա ըստ երևոյթին պէտք է որ ուրախ աղջիկ լինի, սակայն ընկնելով «Գարնան» գործատունը՝ խեղճը կամայ-ակամայ վարակվել է ընդհանուր սև ներկով—դարձել տխրել է, և ահա այս բանաստեղծուհին՝ Արմենուհի Տիգրանեանը՝ պատմում է, որ իր «սիրտը տրորվել է», «հոգին տխմարել», թախիծի մէջ է, և այլն և այլն. այսինքն ճիշդ և ճիշդ նոյն դրութեան մէջ է ընկել, ինչ և «Գարունի» գրեթէ բոլոր բանաստեղծները:

Մազմանեան բանաստեղծը մի ոտանաւոր ունի, և նրա անունն էլ գիտէք ինչ է. «Տըրտմութեան խոհերից»: Սրա սիրան էլ սև է, տխուր, ճակատը դալուկ. սա նատում է մոայլ սենեակում և սգում ու սգում է, և իր հեկեկանքը ուղարկում է սիրուհու տունը, որ նա գնայ գիշերը ծեծի սիրուհու սենեակի դուռը և... ոռնայ... Մարդը այդպէս էլ ասում է.

Ու գիշերն անվերջ ոռնում ու հեծում:

Վերջապէս թերթելով, գալիս հասնում ենք «Գարունի» վերջին՝ տասներեքերորդ բանաստեղծին՝ Վ. Տէրեանին: Սա երեք բանաստեղծութիւն ունի. մէկը՝ «Հատուած», իսկ երկուսը՝ «Ոսկի հէքիաթ» գրքից:

«Հատուածը» սկսում է այսպէս.

Ցոգնատանջ սրտով նստեցի մենակ
Աշխարհում, աղօտ...

Եւ ահա նստում է ու լալիս: Շատ է լալիս թէ քիչ, այդ Սատուած գիտէ. միայն թէ մարդը մօտ 120 տող լալիս է և վերջին չորս-հինգ տողում, տեսնելով որ միլիոնն է՝ ոչ մի օգուտ չը կայ իր լացից, յանկարծ

Աղաղակեցի օրհներգու ձայնով,
Ճիչ հանեցի ես սիրով խնդագին,
Սիրտս նետեցի քարին ու ջրին,
Խառնեցի հոգիս աստղերի երգին:

Եւ... գնում է դէպի յաւիտենականութիւն:

Սա «Հատուածն է»: Գալով «Ոսկի հէքիաթներին», դրանցից առաջինում իմանում ենք այն, որ ոչինչ չենք հասկանում, իսկ երկրորդից հասկանում ենք ճիշդ նոյնքան, որքան առաջինից:

Տեսնում էք, որ սա էլ հունար է. այնպէս գրել, որ ինչքան կարդաս՝ ոչինչ չը հասկանաս. և այս բանի մէջ «Գարունի» բոլոր բանաստեղծները կատարելապէս հասել են իրանց նպատակին:

Սրանով վերջացնում ենք մեր այս ակնարկը և ասում.

Գոնէ այսպէս է «Գարնան» երկրորդ գիրքը:

Առաջինը անհամեմատ լաւ էր:

Երկրորդի միակ աշողը՝ արձակ գրուածքներից կարէն Մէլքայէլեանի «Առաջին վիշտն» է, իսկ ոտանաւորների մէջ՝ Ա. Ծատուրեանի երկուսը, Բաբեանի «Կրակն այս գիշեր» և իր գաղափարով միայն Ցակոբեանի «Աշխատանքի երգը», որը, սակայն, չափազանց աղքատ է կազմուածքով (աննըման, նման, աննման և այլն):

Ահա ձեզ և մեր հին և նոր «բանաստեղծների» գարունը. իսկ թէ ինչ է լինելու սրանց աշունն ու ձմեռը, այդ դժուար չէ երևակայել: Կար-Միր

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ԳՐՔԵՐ

1) Ցոյն-Արեւելքի հին-եկեղեցական աստուածաբանական գիտութիւնը իր ծաղկման շրջանում (IV—V դար), պրոֆ. Ն. Սագարդայի, թարգմ. Արտակ վ. Սմբատեանի, Վաղարշապատ, 1910 թ., էջ 77, գ. 15 կ.: 2) Թեմական վերանորոգութիւն եւ Մատթէոս II Կաթողիկոս, Կարապետ Եաղուբեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 46, գ. 25 կ.: 3) Къ вопросу объ открытіи высшаго учебнаго заведенія на Кавказѣ, А. С. Бабова, Թիֆլիս, 1911 թ., էջ 20, գ. 20 կ.: 4) Стихотвореніе и разсказъ, Гайкъ Н. Каграманяна, Գրօզնի, 1911 թ., էջ 35, գ. 15 կ., 5) Տղամարդկանց եւ կանանց զաղտնի հիւանդութիւնների բժշկարան չափահասների համար (նկարներով), կազմեց մեդիցինայի ֆէլդշէր-մասսաժիստ Սրտէմ (Յարութիւն) Եսայեան, Թիֆլիս, 1911 թ., էջ 153, գ. 50 կ.: 6) Սխրագործութիւն, արևելեան զրոյց Ա. Զ-ի, թարգմ. ռուսերէնից, Սամարդանդ, 1911 թ., էջ 32, գ. 10 կ.: 7) Կօօպերատիվ սպառողական ընկերութիւնը, Ե. Լազարեանի, Բաքու, 1911 թ., էջ 121, գ. 20 կ.: 8) Հաշիւ Թիֆլիսի Հայոց եւ Մեղու աշխատանքի տան Ընկ. 1909 և 1910 թ.ների, Թիֆլիս, 1911 թ., էջ 40: 9) Տեղեկագիր 1908–1909 ուսումնական տարվայ Մահրիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցի, Թիֆլիս, 1911 թ., էջ 45: 10) Տեղեկագիր Հայոց Ազգագրական Ընկերութեան 1910 թ. գործունէութեան, Թիֆլիս, 1911 թ., էջ 11:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, 25 մարտի

Սրանով յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը մեր բոլոր այն բարեկամներին, ծանօթներին և արժանապատիւ հայրերին, որոնք ցաւակցութիւն են յայտնել թէ հեռագիրներով և թէ նամակներով մեր ամուսնու և եղբօր՝ Զաւադ-բէկ Իշխանեանցի մահվան առիթով:

Եկատերինէ Ա. Իշխանեանց
Սարգիս Իշխանեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեծ աղմուկ հանեց վերջերս Գերմանիայում այն հարցապնդումը, որ ուղղեց բէյխստագի նիստերից մէկի ժամանակ սոց.-դեմօկրատ պատգամաւոր Լէդէբուրը պետական քարտուղար Կիդէրլէն-Վեխտէրին:

Հարցապնդումը վերաբերում էր նրան, թէ ինչ իրաւունքով պրուսական ոստիկանութիւնը Բերլինի քաղաքապետ Ֆոն-Թաուֆի հրամանով ռուսական կառավարութեանը յանձնեց ռուսահպատակ Մօնտագին, որը ներկայիս բանտարկված է: Կիդէրլէն-Վեխտերը դրան պատասխանում է, որ յանձնումի մասին խօսք անգամ լինել չէ կարող, որովհետև Մօնտագը արտաքսված էր երկրից և ոչ թէ յանձնված:

Լէդէբուրը պետ.-քարտուղարի այս վարմունք անուանում է յանդգնութիւն, որի համար էլ արժանանում է նախագահի նկատողութեանը: Սրանից յետոյ մէջտեղ է գալիս ազատախոհ Գոտգէյնը, որը պահանջում է ճշգրիտ պատասխան տալ հարցապնդումին, ասելով՝ գերմանական բէյխստագի կառավարութեան պրէստիժի համար անթոյլատրելի է գործիք լինել և խուզարկուի դեր կատարել: Այս հարցի առիթով, երբ Լէդէբուրը երկրորդ անգամ հարց է տալիս Կիդէրլէն-Վեխտերին և պահանջում, որ նա այդ առիթով հեռախօսով հարց տայ ֆոն-Թաուֆին, Կիդէրլէն-Վեխտերը նեղն ընկնելով խոստովանում է, որ Մօնտագը ոստիկանութեան միջոցով հացված է եղել մինչև սահմանագուխը: Գոտգէյնը նկատում է, որ այդ պէտք է ասվէր հէնց սկզբից և ոչ թէ խուսափողական պատասխաններ տրվէր: Պրուսական ոստիկանութեան վարմունքը կոչվում է ոչ թէ արտաքսումն երկրի սահմաններից, այլ յանձնումն: Ի հետևումն այս «խոստովանութեան» Լէդէբուրը յայտնում է, որ պետական քարտուղարը զուրկ է պարլամենտական պատուի զգացմունքից, որին հետևում է նախագահի երկրորդ նկատողութիւնը:

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Թիւրքաց պօստային մինիստրի պաշտօնի համար տալիս են հայազգի պատգամաւոր Զոհրապի անունը:

✦ Կ. Պոլսում փակվեց ռուսատեաց «Տասվիրը Եվքիար» լրագիրը դեսպան Զարիկովի պահանջով:

✦ Կ. Պոլսում յամառօրէն խօսում են, որ Ցէտինէում պաշտօնավարող թիւրք դեսպանը յետ է կանչվում:

✦ Զինական բօղդիխանը մի հրովարտակով յորդորում է ժողովրդին միանալ կառավարութեան հետ:

✦ Զինական մինիստրը նաւատորմի կառուցման համար խնդրում է 7 միլիոն լան:

✦ Զինական զինուորական մինիստրը հրաւիրեց զօրահրամատարներին մոբիլիզացիայի ընդհանուր պլան մշակելու համար:

✦ Լուրջ կերպով հիւանդացաւ ա-կանջի բորբոքումով Ս. Վիտէն:

✦ Դերեաբինի բանտում 10 բանտարկեալներ բէժիմի պատճառով մահափորձ կատարեցին:

✦ Ֆրակցիայից եկած հոկտեմբերեանները վերադարձան ֆրակցիայի բիւրօն:

✦ «Новое Время»-ն հաղորդում է, որ բժ. Կրիչևսկին արմատական միջոց է գտել թոքախտի դէմ, իսկ բժ. Կէդրօվսկին բացել է բորոտութեան կուլտուրան: Այս տեղեկութեանը տեղեակ շրջաններում կասկածով են վերաբերվում:

✦ Օդեսայի քաղ. վարչութիւնը ակադեմիսների կլուբին նպաստ տուեց 1.000 բուբլի:

✦ Օդեսայում երդ.-հաւատարմատարների խորհուրդը մերժեց դեներալ Տօլմաչեվի առաջարկութիւնը՝ ներկայացնելու իրան հրեայ փաստաբանների ցուցակը:

✦ Տուլայում երկու օրվայ ընթացքում կալանաւորվեցին 70-ից աւելի մարդ:

✦ Քիշինեվում նահանգապետը դադարեցրեց «Бес. Жизнь» և «Другъ» լրագիրները, որովհետև նրանց խմբագիրները բանտում են: Նրանց փոխարէն լոյս տեսան «Бессарабія» և «Знамя»: Բայց առաջինը դարձեալ դրաւվեց և դադարեցվեց:

✦ Ռուսաց սինոդի օրգան «Колоколъ»-ը նախագծում է հրատարակել Կահիրէում կամ Սամարուլում, նաև Կազանում մի լրագիր մահմեդական կրօնի դէմ կռուելու համար, որը վտանգաւոր է իբր թէ ռուսաց պետութեան եկեղեցու համար:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.
31 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հրատարակվեց ծովային մինիստրի հրամանը, որ ազդարարում է, թէ մինիստրութեան կենտրօնական նաւահանգստային հաստատութիւնների բովանդակ ձգտումը պէտք է ուղղված լինի բացառապէս գործող նաւատորմի օգնութեան համար, թոյլ չը տալով ոչ մի աւելորդ բան և շռայլութիւն գումարայատկացումների մէջ:

Յարսկոյէ Սելօյում կայսրին ներկայացաւ հաւատարմագրերը յանձնելու համար աւստրօ-ունգարական դեսպան կոմս Բերտհոլդը: Ունկնդրութիւնից յետոյ կայացաւ Բարձրագոյն նախաճաշ դեսպանի և դեսպանատան պաշտօնեաների ներկայութեամբ:

Պաշտօնական անձանց ներկայութեամբ հոգեհանգիստ կատարվեց ռուս-եապօնական պատերազմում ընկած զինուորականների յիշատակին:

Կապիական ծովի հիւսիսային ափին ընկած նաւթաբեր հողաբաժինների հետազօտութեան համար ուղարկվեց հանքային ինժեներ Ադիասէվիչը:

Ֆինանսների մինիստրութիւնը մինիստրների խորհրդին ներկայացրեց մի նախագիծ՝ զինուորական հարկի մասին:

Զինուորական մինիստրը մեկնեց ծառայութեան գործերով դէպի Բօսթով Դ./վ.:

ԽԱՐԲԻՆ: Ապրիլի 3-ին Մուկդէնից սեղ են գալու չինական բժիշկներ՝ Սունգարին և Ուսուրին սանիտարական տեսակէտից հետազօտելու համար:

ԿԻԵՎ: Դումայի միջնորդում է նշանակել մնատօրական քննութիւն քաղաքային բոլոր մնտեսութեան:

ՕԴԵՍՍԱ: Դումայի պատաւոր հաշտարար դատաւորներ ընտրեց Մէչնիկովին և Պուբիլիգէվիչին:

ԼՕՆԴՕՆ: Բէյտէրին Վաշինգտոնից հաղորդում են, որ Մասաչուսէթսի նախկին նահանգապետ Կուրտիս Գիլը նշանակվեց դեսպան Պետերբուրգում:

ՊԱՐԻԶ: Օրագնաց Պրիւն, բարձրանալով Լօնդօնում՝ իջաւ ցերեկով Էսիլէմուլինօյում: Թռիչքը կատարվեց առանց հանգստանալու:

ՄԻՆՍ: Բէլգիայի շատ տեղերում զգացվեց երկրաշարժ:

ՏՕԿԻՕ: Պետերբուրգից ստացված տեղեկութիւնը, թէ առաջի մինիստրը մտադրվում է հաստատել ռուս-եապօնական ընկերութիւն, ընդունվեց համակրանքով հապօնական և օտարազգի լրագիրների կողմից:

ՄՕՍԿՎԱ: Մի փողոցում երկաթեայ գնձակը երբորդ յարկը բարձրացնելիս սանդուխները քանդվեցին. սպանվեցին երեք, մահացու վիրաւորվեցին երկու բանուր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Իր պաշտօնը թողնող աւստրօ-ունգարական դեսպան կոմս Բերտհոլդին շնորհվեց Ալէքսանդր-Նէվսկիի շքանշանը:

Առաջի մինիստրութեանը կից գործող առանձին խորհրդակցութիւնը խօսեց յօգուտ այն առաջարկութեան, որ Կիէվի և Մօսկվայի առևտրական ինստիտուտներին բարձր դպրոցների իրաւունքներ տրվին:

ԲՈՒԽԱՐԷՍՏ: Կաթոլիկ արքեպիսկոպոս Վիլատը խնդրամատոյց եղաւ միտրոպոլիտին՝ ընդունել իրան բուսիմական ուղղափառ եկեղեցու գիրկը:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուվկա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Սահմն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՔՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՄՈՒՄԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ 11—12 Ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՀԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մարկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒՎԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ ԲԺՇԿ Գ. Ս. ՋԻԼԲԵՐԶԱՑ—12½—1½ ժ. մանկարարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Գ. ԿԵՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱԶԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:

ՆԵՐԿՈՆՆԵՐ՝

ԿԻՆ ԲԺՇԿ Գ. Ս. ՋԻԼԲԵՐԶԱՑ—6—6½ ժ. մանկարարձ., կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:

Վճարը 50 կ.: Զքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—36

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՈՒՔ ԾԱՆՕԹ ԷՔ
բօրսային օպերացիաների հար:
ԴՈՒՔ ԳԻՏԷՔ
որ հարուստների ֆինանսական բարեկեցութիւնը ստեղծել է բօրսան:
ՁԵԶ ՅԱՅՏՆԻ Է
որ ներկայ մօմենտը միանգամայն բարեյաջող է բօրսային օպերացիաների համար՝ ֆոնդերով և գինտային արժեթղթերով, գլխաւորապէս վերջիններով, ինչու որ երկրի տնտեսական կեանքի առաջադիմող բարեկեցութիւնը և արդիւնաբերութեան ու առևտրի զարգացումը անխուսափելիօրէն ազդում են արժեթղթերի գների բարձրացման վրա:
ԴՈՒՔ ՅԱՆԿԱՆՈՒՄ ԷՔ
ծանօթանալ բօրսային շահագործման տեխնիկայի հետ և պարզել ձեզ համար, թէ ինչպէս Բօռշիլլները և գրամագլխի այլ թաղաւորները բօրսայի միջոցով ձեռք են բերել իրանց հարստութիւնները և թէ ինչպէս այժմ հարստութիւն են դիզում նոյն միջոցով սովորական մահկանացուները:
Պահանջեցէք բոլոր գրավաճառանոցներում, քիոսկերում եւ երկաթուղային կայարաններում ՀԵՏԵՒԵԱԼ ԳԻՐՔԸ՝
ՀԱՄԱՌՕՏ ԵՒ ՄԱՏՉԵԼԻ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԻՆ՝
„ПУТЬ КЪ БОГАТСТВУ“
ԲՕՐՍԱՅԻՆ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐ
Գինը 50 կոպէկ:
Հրատարակութեան պահեստը. С.-Петербургъ, Разъѣзжая ул., д. № 5, СПБ. Николаевская артель.
Փոխերը կարելի է ուղարկել պօստային մարկաներով:
ԱՌԵՒՏՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՁԵՂՔ:

(Հ, 16) (П. 24883) 105. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի տեղեկութիւն Ընկերութեան պ. պ. անդամների, որ կիրակի, ապրիլի 3-ին առաւօտեան ժամը 11-ին Քաղաքային Վարկի Ընկերութեան գործավարական դահլիճում (Պուշկինսկայա փող., № 3) կը կայանայ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
մարտի 20-ին չը կայացածի փոխարէն, որի ժամանակ քննութեան կառնվին բոլոր հարցերը, որոնք նշանակված էին մարտի 20-ի ժողովի համար: Ընդ սմին Վարչութիւնը պատիւ ունի յայտնելու պ. պ. անդամներին, որ, համաձայն Ընկերութեան կանոնագրութեան § 26-ի, նշանակված ժողովը յամենայն դէպս կը համարվի օրինաւոր՝ չը նայելով ներկայ անդամների թիւին:
(2.) 281. 2—2



ԱՄԵՆՔԻՆ ՅԱՅՏՆԻ Է,
որ Շվեյցարիան Ցերկայանում է իբրեւ գլխաւոր ադրիւր ամէնաակ ժամացոյցների Քարիկացիայի. հետաքրքիր որ, ոչ ոք կանում է ձեռք բերել առաջին ձեռքից, ուղղակի Շվեյցարիայից, ժամացոյցը թող բերել տայ միայն մեզանից: Այդ ժամաց. զրպանի են, շատ շքեղ, կապարագոյնից, ֆանտազի ձևի, միանգամայն տափակ, ոչ հաստ արծաթէ բոբոսակէզօծ կամ արծաթազօծ ցիֆիերլատով, ըէմօնտուար, լարումը 40 ժամը մի դամ, քարերով, անկեղծային գեղեցիկ մայանիկով (տես նկ.): Առանձին ուշադրութիւն է դարձված ժամաց. ուղիղ ընթացքի վրա, որ ստուգված է մինչև ... և այնքան ամուր է, որ ֆաբրիկան դրա համար երաշխաւորում է 5 տարով: ժամաց. հետ միասին ուղարկում ենք ֆանտաստ. կախարան «Մօդերն», յղկված մարմրից, բրօնզեայ 2 սիներով, գեղեցիկ շինուածք՝ յատկապէս ճաշակով (տես նկ.), որպէսզի կախարանի վրա՝ պարապելու ժամանակ կախելով ժամացոյցը, ստացող է մի գեղեցիկ զարդ գլխաւորապէս սեղանի համար: Ժամացոյցի գինը, կախարանի հետ միասին, միայն 4 ր. 25 կ., 2 հատը 8 ր.: Ուղարկելիս վճարվիր վճ., առանց կանխավճ.: ճանապարհածախքը, մաքսի հետ միասին, 40 կ., Սիբիր—75 կ., Հայաստան, կարելի է կարել և կպցնել ծրարին կամ բացիկին.

РОБЕРТЪ КОЛЛІО, Шодефонъ 140. (Швейцарія) | Robert Colliot. Chaux-de-Fonds (Suisse) rue du Temple Allemand № 17.

Շվեյցարիա ուղարկվելիք նամակներին պէտք կպցնել—փակին 10 կ., իսկ բացիկին 4 կ. մարկա: Պահանջելիս գրել ռուսերէն լիզուով:
(о. м.) (В. 13344) 155. 3—1

ՄԻՆՉԵՒ ԾԱՂԿԱԶԱՐԴ
„Աղբիւր-Տարազի“ խմբագրութիւնը, գլխաւորելով բազմաթիւ ուսուցիչներ ծնողների և աշակերտների թախանձանքին, որոշեց բունակել դպրոցական աշակերտների հասցէով մինչեւ ծաղկազարդ ընդունել բաժանորդագրութիւն հետեւեալ պայմաններով՝
I. ԱՂԲԻՒՐ և ԱՌՈՂՋԱՊԱՀ . . . . . տարին 2
II. ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ և ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ տարին 3
III. ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ, ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ, ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, ՏԱՐԱՋ, ԳԵՂԱՓՆՋԻԿ, ՕՐԱՑՈՅՑ, ԱՐՈՋԱ, ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ . . տարին 5
Ծաղկազարդից յետոյ այլեւս ոչ մի բացառութիւն: «Աղբիւր», տարեկան 3 ր., ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱՋ, բոլոր յաւելուածներով և պրէմիաներով 10 ր. (Արտասահման 18 ր.):
Այն դպրոցներն ու գրադարանները, որոնք 10 ր. փոխարէն 5 ր. են ուղարկում, նրանք կը ստանան միայն ԱՂԲԻՒՐ և ԱՌՈՂՋԱՊԱՀ:
Ապահիկ կամ մաս-մաս բաժանորդագրութիւն չէ ընդունվում:
Հասցէն՝ (ТИФЛИСЪ. Редакція «АГБЮРЪ-ТАРАЗЪ».
(TIFLIS (Caucase). Diréction AGBUR-TARAZ.
(2. Հ.) 30. 0—11

ՀԻՊՆՕՏԻԶՄԻ
ԹՂԹԱԿՑԱԿԱՆ ԿՈՒՐՍ
Հիպնոտիզմը սահմանված է լինել ամենաուժեղ միջոցը բուժական կլինիկական և բարոյաբարձրական զարգացման մէջ: Որ հիպնոզական երևոյթը գոյութիւն ունի, որ ամեն ոք ենթարկվում է այդ բնական ոյժի ազդեցութեանը, այլ ևս կասկած վերցնում: Հիպնոտիզմի կարևորութիւնը ընդունված է բոլոր նրանցից, որոնք սուսմսոխրած են այս գիտութիւնը: Հիպնոտիզմի հակառակ խօսում են միայն նրանք, որոնք տկար են ըմբռնած ներշնչման օրէնքը:
Ներշնչման սկզբունքի մէջ է գտնվում աշողութեան և առողջութեան ուղիղ ոյժի-մուրը:
ՍՈՎՈՐԵՑԷՔ ՀԻՊՆՈԶԱՑՆԵԼ. ՍՈՎՈՐԵՑԷՔ ՆԵՐԾՆՉԵԼ
Հիանդութիւնը անբնական է. սովորեցէք դարմանել ձեզ ձեր հիանդութիւնները ձեր սեփական հոգու զօրութիւնով:
Մտախորհուրդը ոյժ է. սովորեցէք ուղղել ձեր մտախորհուրդը յօգուտ ձեր առողջութեան, երջանկութեան և աշողութեան:
Մասնագէտ հիպնոտիստ Յարութիւն Զէքէրջեանը պատրաստած է մի բարակցական կուրս հայերէն լեզուով հայերի համար: Այս կուրսը պարզ և հասկանալի լեզուով պարզում է բացատրում է հիպնոտիզմի և մտքի ոյժերի երևոյթը, և սիստէմի վերածված դասերով սովորեցնում է ընթերցողին այս «խորհրդաւոր» գիտութեան գաղտնիքները:
Հիպնոտիզմի կարող է սովորել ամեն ոք:
Հիպնոտիզմի կուրսի արժէքի և այլ մանրամասնութիւնների համար պէտք ուղարկել 10 կոպէկի նամակագրոշ և ստանալ նոյն հեղինակի «Ինչպէս հիպնոտացնել» գրքոյկը:
Դիմել հետեւեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago Ill. U. S. A.
(Ե.2) 689. 100—81

Լոյս տեսաւ
ՈՍԿԷ ՍԱՆԴՈՒԽՔ
Նօվելլա Ֆեոդոր Սօլոգուբի
Թարգմանութեամբ Յակոբ Գենջեանի
Գինը 8 կոպ.:
325. 3—1

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ականջի, բերանի, քթի,
հիւանդութիւններ,
Ընդունեւ (առաւօտեան 9—1 ժամը.
լուծիւնը (երեկոյեան 5—7 ժամը.
Վեհամիտովսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3-րդ գիմնազիայի կողքին:
(о. м.) 1227. 100—66

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՏՆԵՐ Գօլովինսկի պր. վրա, Գրիբօյեդովսկայա, Խայլովսկայա, Նիկօլայևսկայա, Դիմիտրիևսկայա և այլ փողոցների վրա:
ԽԱՆՈՒԹՆԵՐ տօնավաճառում (եարմարկա) Մեռելեսկի նրբափողոցում:
ՀԻՒՐԱՆՈՑ Ադաթումանում, սեպ. գետի վրա:
Բոլոր շինութիւնները քարաշէն են և եկամուտ են բերում Դիմել «Օրիանաս» հիւրանոցը № 11, տա. ժ. 9—12:
(о.м.) 309. 9—2

5 ՌՈՒԲԼԻ ԱՄԵՆ ՕՐ, և աւելի, հեշտութամբ կարող են վաստակել տղամարդիկ կանայք՝ ընդունելով պատուէրները շատ ապրող մի առաքիչի համար: Դիմումները, տեսութիւն չէ պահանջվում: Պայմանները, ... հասցեն՝ O-ву «СЕМИ-ЭМА.» г. Лодзь, № 39.
(В. 22423) 211. 10—7

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.